

ՄԻՇԷԼ ԲՈՒՆՈՒ
ԼՆՕԹԻ ՊԼՇԵՐ

Մասն Ա.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԿԱՆ

Ê Ø ´ ≈ ¶ ð à ô Â ° ≈ Û Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝

Ø³βi áó ì ³Ñ; Ô³½³ñ»³Ý

ԿԵԱՆՔՆ ԻՄ ԱՌՁԵՒՈՒՄ Է, ՏԵՐ ... ԲԱՅՑ ԴՈՒ ԻՄ ՅԵՏ ԲԱՅԼԻՐ

Բազմաթիւ երիտասարդներ զգում են ապագայի վախը, յատկապէս երբ հարցը վերաբերում է իրենց մասնագիտական-աշխատանքային եւ ընտանեկան ապագային: Չգիտեն, թէ ինչպիսի ճանապարհներով են ընթանալու եւ թէ այդ ճանապարհներն ուր են իրենց տանելու: Ոմանք այնպիսի մտատանջութիւնների են ենթարկւում, որ մերժում են աճել ու հասունանալ, որպէսզի խուսափեն ընտրութիւններ կատարելու անհրաժեշտութիւնից: Վախը հիւանդագին վիճակ է: Դարձնում է մի տեսակ անդամալոյծ: Մարդու մեծութիւնը կայանում է «կեանքը վտանգի (ռիսկի) ենթարկելու» ընդունակութեան մէջ, անշուշտ՝ լաւագոյն եւ լուրջ կերպով խորհրդածելուց յետոյ, բայց առանց սպասելու ու պահանջելու «ապահովութիւններ ընդդէմ ամէն վտանգի», ինչը որ անհնարին է ստանալ:

Մինչ "ռիսկ"ը վտանգաւոր է, գիտակցութեամբ, անկեղծութեամբ եւ ուղղամտութեամբ, նաեւ խոստմնապահութեամբ Յիսուս Քրիստոսի կողքին ընթանալը չի ջնջում ջանքերն ու յոգնութիւնները, բայց ապահովում է սրտի խաղաղութիւնը:

Նա կամենում է մեր իրական երջանկութիւնը եւ կամենում է նաեւ օգնել մեզ՝ ձեռքբերելու այդ երջանկութիւնը, ինչպիսիք էլ լինեն դժուարութիւնները, որոնց կարող ենք հանդիպել մեր ճանապարհին:

Մատթեոսի Աւետարան 6, 30-34

Արդ, եթէ Աստուած այսպէս զգեստաւորում է դաշտերի խոտը, որ այսօր կայ, իսկ վաղը հնոց է նետուելու, աւելին չի՞ պարգեւի ձեզ, թերահաւատներ: Մի՛ մտահոգուէք, ուրեմն, ասելով. «Ի՞նչ ենք ուտելու: Ի՞նչ ենք խմելու: Ի՞նչ ենք հագնելու»: Այս բաների համար հեթանոսներն են մտահոգուում: Ձեր երկնաւոր Հայրը գիտէ, որ դրանց կարիքն ունէք:

Նախեւառաջ Աստծոյ Արքայութիւնը փնտռեցէք եւ Նրա արդարութիւնը, եւ այս բոլորը կը տրուի ձեզ որպէս յաւելեալ: Մի՛ մտահոգուէք, ուրեմն, վաղուայ օրուայ համար, քանի որ վաղն արդէն կ'ունենայ իր մտահոգութիւնները: Իւրաքանչիւր օրուայ բաւական են իր մտահոգութիւնները:

Մատթեոսի Աւետարան 8, 23-26

Քանի որ Յիսուս նաւակ էր նստել, աշակերտները հետեւեցին իրեն: Եւ ծովի վրայ մի այնպիսի ուժգին փոթորիկ բարձրացաւ, որ ալիքները ծածկում էին նաւակը: Յիսուս քնած էր: Յայնժամ մօտեցան Նրան, արթնացրին, ասելով. «Փրկիր մեզ, Տէր, կորած ենք»: Իսկ Նա ասաց նրանց. «Ինչո՞ւ էք վախենում, թերահաւատներ»: Ապա ոտքի ելաւ, սաստեց քամիներին ու ծովին եւ սրանք հանդարտուեցին:

ԿԵԱՆՔՆ ԻՄ ԱՌՁԵՒՈՒՄ Է, ՏԷՐ ...
ԲԱՅՑ ԴՈՒ ԻՄ ՅԵՏ ՔԱՅԼԻՐ

Կեանքն իմ առջեւում է, Տէր,
հրապուրիչ պտուղի նման,
բայց յաճախ կեանքն ինձ վախեցնում է,
որովհետեւ նրա պտուղները քաղելու համար՝
հարկաւոր է դուրս գալ տնից,
քայլել ճանապարհի երկայնքին,
քայլել,
քայլել տակաւին,
բայց ճանապարհների երկայնքին, որոնք լի են շրջադարձներով,
եւ հնարաւորութիւնն չեն տալիս մեր առջեւ նկատելու
ո՛չ տեսարանը, որ սպասում է մեզ,
ո՛չ ծածուկ խոչընդոտը,
ո՛չ դէպի մեզ երկարող ձեռքերը
կամ դէմքերը, որ ուրիշ կողմ են դառնում:

Ճանապարհ ընկնել, մեկնել, ո՛վ Տէր,
խանդավառող արկածախնդրութիւնն է:
Կեանքի կամքն ու փափաքն ունեմ ...
բայց, յաճախ, վախն ունեմ:

Վախն ունեմ մտնելու, վաղը, այն հսկայական շինհրապարակից ներս,
ուր քրտինք է թափում աշխարհը կառուցողների բազմութիւնը:
Մի տեղ կը գտնե՞մ այնտեղ:
Բազո՞ւմ նոր ձեռքեր մնում են անգործ
եւ բազո՞ւմ ընդունակ ուղեղներ
սպասում են աշխատելու:

Վախն ունեմ այս խորհրդաւոր աշխարհի,
որ հմայում է ինձ եւ սարսափեցնում է ինձ,
որովհետեւ լսում եմ ծիծաղի պոռթկումները
եւ տեսնում եմ հաճոյքները,
որ հեռուից աչքով են անում,
բայց լսում եմ նաեւ
մարդկային տառապանքների անծայրածիր գոչիւնը
եւ այդ աղաղակները տհաճ են ինձ,
որովհետեւ դրանք լռեցնել ես չեմ կարող:

Վախենում եմ այս սիրուց,
որն արշալոյսի կենսուրախութեան մէջ
նոյնքան՝ որքան գիշերուայ դատարկութեան մէջ
իմ ամբողջ էութեամբ փափաքում եմ:
Խորհրդաւոր ուժ, որ տարածում է ամբողջ սրտովս մէկ
եւ այնտեղից առատօրէն հեղում է մարմնիցս դուրս:
Մտահայած փափաք, երբ երկարում են օրերը,
վերջապէս հանդիպելու մի հէ՞ծքի,
մի դէմք, որ ճանաչեմ եւ որ ճանաչի ինձ
որպէս միակ փնտռուածը:

Ծարաւ՝ շոյելու այդ դէմքն իմ հայեացքով,
քնքշուլթեամբ ձեռքերիս փերի մէջ ամփոփելու՝
մէկ պահ յետոյ իր շուրթերը համտեսելու
եւ իմ շուրթերը համտեսել տալու համար:
Արդէն իսկ ծարաւ, որ մեր այդ սէրը
մի օր դառնայ մարմին,
ու արձակի մի ճիչ,
ճիչը նորածին կեանքի,
երբ սէրը տալիս է իր պտուղը:

Ես փափաքում եմ, բայց վախենում եմ, Տէր:
Բազո՛ւմ սէրեր ձախողուեցին աչքիս առաջ,
երջանկութեան խաբկանքներ,
օճառի պղպղակներ, որ պայթում են:
Դժուարութեամբ յառաջ քայլող բազո՛ւմ սէրեր,
շարունակ վտանգի մատնուած:
Ընկերներին բազո՛ւմ զոյգեր,
որ կարծում էին իրենց ընդմիջտ միացած,
բայց այսքա՛ն շուտով միմեանցից հեռացան:

Այո՛, վախն ունեմ, Տէր,
եւ քաջութիւնն ունեմ ընդունելու դա,
եւ քաջութիւնն ունեմ Քեզ պատմելու:
Եւ եթէ այսօր փակում եմ աչքերս,
առջեւս ընկած ճանապարհին Դիտել
մերժելու համար չէ,
այլ հանդիպելու համար Քեզ, աղօթելու համար Քեզ,
որովհետեւ կեանքի փափաքն ունեմ, Տէր,
փափաքն ունեմ,
եւ վստահու՞մ եմ Քեզ:

Ա՛հ, Աստուած իմ,
այնպէս արա՛, որ ես երբեք չմոռանամ
երախփագիտութիւնս յայտնել Քեզ կեանքիս համար:
Որովհետեւ կեանքը Քոնն է,
Դու Հայրն ես
եւ Հայրն ես ամբողջ կեանքի,
Դու կամեցար ինձ իբրեւ որդի,
որդի, որ ծնուել է Բերկրանքի համար:

Տուր ինձ մարդ լինելու պարծանքը,
ոտքի կանգնած մարդ, ինչպէս որ Դու կամենում ես,
որ Քեզնից ընդունում է հրաշալի առաքելութիւնը
ինքնուրոյն կազմաւորուելու,
վեր խոյանալու, աճելու,
արժէքներով հարուստ եւ ազատ քայլելու համար
այս ճանապարհով, որ իմ առջեւում է:

Պարգեւիր ինձ շնորհ՝ ընդունելու կեանքը
ամբողջ սրտով,
բազուկներին ամբողջ կարողութեամբ,
որովհետեւ ծնողներս կեանքն աւանդեցին ինձ սիրով,

նոյնիսկ եթէ սէր
– թերեւս –
տկար ու դիւրաբեկ,
եւ ես պատասխանատու եմ այս կեանքի համար,
որովհետեւ այն ինձ պարգեւել էն:

Օգնիր ինձ, որ երբեք չմսխեմ կեանքս,
կեանքը մարմնի, որ աճում է,
եւ հոգու, որ կարող է ցրուել:
Եւ որպէսզի չյափշտակեմ կեանքն ուրիշներին,
այլ միմիայն ընդունեմ, փարուեմ,
երբ ուրիշներն այն նուիրում են ինձ:
Եւ որպէսզի այն փակ չպահեմ սրտիցս ներս,
փոխանակ նուիրելու
մերձաւորներիս, որ զուրկ են նրանից,
մինչեւ որ այն չեմ կիսի նրանց հետ:

Հեղիր իմ մէջ Քեզ մշտապէս փնտռելու փափաքը,
Քեզ հանդիպելու, Քեզ ճանաչելու եւ Քեզ սիրելու համար,
եւ Քո հետ դառնալու համար այն մտերիմ ընկերը, որ Դու կամենում ես,
ընդունելով Քո կեանքը իմ կեանքի մէջ,
որպէսզի իմ ծաղիկները եւ իմ պտուղները
լինեն նաեւ Քոնը,
իմը լինելուց բացի:

Օգնիր ինձ քայլել
առանց ուղելու իմանալ՝
թէ իւրաքանչիւր շրջադարձի ետեւում
ի՛նչ է ինձ վերապահում ձանապարհը.
ո՛չ թէ միտքս ամպերի մէջ,
այլ ոտքերս գետնին ամուր դրած,
իսկ ձեռքս՝ Քո ձեռքին տուած:

Ահա այսպէս, Տէր, տնից դուրս կը գամ
վստահ ու գուարթ
եւ անվախ կ'ընթանամ անյայտ ձանապարհով,
որովհետեւ կեանքն իմ առջեւում է,
բայց Դու ինձ հետ ես քայլում:

ՈՒՐԱԽԱՅՐՈՒ ԻՆՁ, ՏԵՐ ...

Բազմաթիւ հաւատացեալներ համոզուած են, թէ յարգանքի պակաս է եկեղեցու մէջ ժպտալը կամ ուղղակի ծիծաղելը: Լալն ու արտասուելը, մինչդեռ, գովելի է: Ինչո՞ւ մէկն այո՛, իսկ միւսը՝ ո՛չ:

Մեր խօսքը չի վերաբերուամ աղմկալի ցրուածութեանը, ջղագրգիռ ծիծաղի պոռթկումներին, որոնք յաճախ իրենք իրենցից, մերձաւորներից եւ ամէնօրեայ կեանքի չարքաշ վիճակից փախչելու ունայն փորձեր են: Մեր խօսքը վերաբերուամ է այն ողջամիտ բերկրանքին, որն արտայայտուամ է կազդուրիչ ժպիտով ու ծիծաղով:

Քրիստոնեայ լինելու ուրախութիւնը պէտք է երբեմն արտայայտուի: Շատ յաճախ մեր մերձաւորներին ներկայացնում ենք մութ, մտահոգ ու խոժոռ դէմքեր: Մեր գոհաբանական Պատարագները տխուր են, ասում են երիտասարդները: Նրանք յաճախ ձանձրանում են: Յանցաւոր չեն:

Դիւրին չէ միշտ ուրախ լինելը: Հնարաւոր է երկրի վրայ: Սակայն անհնարին չէ ամբողջ սրտով ընդունել իրական երջանկութեան պահերը եւ կիսել դրանք մեր մերձաւորների հետ:

Յիսուս Քրիստոս ինքն է, որ մաքուր սրտի մէջ ամբողջովին հիւրընկալուելով, տալիս է մեզ ... ծիծաղելու փափաքը:

1 Յովիաննես 1, 1-4

Այն՝ որ ի սկզբանէ էր, այն՝ որ մենք լսեցինք, այն՝ որ մենք տեսանք մեր աչքերով, այն՝ որին հայեցինք եւ այն՝ որին հպուեցին մեր ձեռքերը, այսինքն՝ կեանքի խօսքը (քանի որ կեանքը տեսանելի դարձաւ, մենք այն տեսանք եւ նրա մասին վկայում ենք եւ ձեզ աւետարանում ենք յաւիտենական կեանքը, որ Հօր մօտ էր եւ տեսանելի դարձաւ մեզ), այն՝ որ տեսանք եւ լսեցինք, նոյնը մենք աւետարանում ենք նաեւ ձեզ, որպէսզի դուք նոյնպէս հաղորդակից լինէք մեզ: Մեր հաղորդութիւնը Հօր եւ Իր Որդու՝ Յիսուս Քրիստոսի հետ է: Այս բաները գրում ենք ձեզ, որպէսզի մեր ուրախութիւնը կատարեալ լինի:

Սաղմոս 99, 2

*Ծափահարեցէք Տիրոջը, երկրի բոլոր բնակիչներ:
Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջը:
Յնծութեամբ ներկայացէք Նրա առջեւ:*

Զգիտեմ, թէ ինչո՛ւ, Տէր,
այս առաւօտեան Քեզ աղօթելիս
յանկարծ անդրադարձայ,
որ երբեք չեմ երեւակայել Քեզ
ծիծաղելիս:

Ծիծաղելիս մի իրական հնչուն ծիծաղով,
որ տարածում է իր արձագանքները
յաջորդական ալիքներով,
դէպի ուրիշները, որոնք ընկալում են դրանք,
ուրախանալով այդ պարգեւուած բերկրանքի համար:

Պատկերացնում եմ Քեզ հանդարտ,
երբեմն՝ չափաւոր ժպիտով,
բայց ամէնից աւելի՝ լուրջ ու մտախոհ,
երբեմն էլ՝ արտասուելիս:

Եւ Դու, Տէր, գիտես, թէ ես քանիցս երջանիկ եմ
իմանալով, որ ընդունակ ես եղել արտասուելու:
Աւետարանիչներդ յարմար չեն նկատել աւանդել,
որ մի օր, ա՛յս կամ ա՛յն առիթով,
սրտանց ու լիաթոք ծիծաղեցիր:
Ցաւում եմ դրա համար:

Նաեւ տեսնում եմ Քեզ գեղեցիկ, լոյսով լի, ո՛վ Տէր,
աղօթքի մէջ պայծառակերպուած,
կամ էլ՝ զայրոյթի շանթերով փայլող աչքերով,
որ մտրակում ես կեղծաւորներին
կրօնի ու բարոյականութեան:
Տեսնում եմ Քեզ մուսլ ու այլայլուած,
միայնութեան ու վախի մէջ դողացող,
չարչարանքների ներքոյ արիւնոտ:
Բայց որ սրտանց ծիծաղում ես ... դա, իսկապէս, ո՛չ,
չեմ տեսնում:

Եւ սակայն ծիծաղում էիր, դրանում ես վստահ եմ:
Թէեւ բարեպաշտ հոգիներից շատերը կարծում են,
թերեւս,
թէ վայելուչ է Քեզ այդպէս պատկերացնել:

Դու, երբ դեռ մանուկ էիր, ծիծաղում էիր Նազարէթում,
երբ ընկերներիդ հետ խաղում էիր բակում,
ծիծաղում էիր, պատանի հասակումդ, զարմիկներիդ հետ,
մինչ քարաւանով վերադառնում էիք Տաճարից:
Ծիծաղում էիր աշակերտներիդ հետ,
Գալիլիայում, Կանայի հարսանիքին,
եւ երգում էիր,
եւ պարում էիր, երբ բոլորը պարում էին:
Բայց յետոյ ...
իմ համար դժուար է պատկերացնել կեանքիդ միւս տարիները: ...

Ջանացի գտնել դրա պատճառը:
Կարծում եմ, թէ գտել եմ ... :
Պատճառն այն է, որ հաւատքս փկար է:

Առանց մեծագոյն դժուարութեան
հաւատում եմ, որ Դու Աստուած ես:
Հայրդ է թելադրել եւ յուշել ինձ սա,
վստահ եմ սրան,
որովհետեւ ասացիր մեզ, թէ մենք միայնակ
չենք կարող հաւատալ դրան:
Եւ ես երախտագիտութիւնս եմ յայտնում Հօրդ
այս հիանալի պարզեւի համար,
որ կերպարանափոխում է կեանքս:
Բայց խոստովանում եմ,
որ ինձ այդքան էլ հեշտ չէ
հաւատալ, որ Դու նաեւ մարդ ես:
Ո՛չ թէ գերբնական մարդ, այլ՝ մարդ.
պարզ, իրական:
Եւ որ մարդ լինելու դեր չես խաղացել,
մարդու դիմակ հագած,
մեզնից մէկը լինել կեղծելու համար,
մեր ամբողջ կեանքին զօրակից լինել կեղծելու համար:

Եւ սակայն, Տէր,
թէեւ ինձ երբեմն դժուար է հաւատալ այս բանին,
երբ այս խորհուրդի մասին մտածում եմ միայն ուղեղով,
այդուամենայնիւ, իմ համար սա ամենաաքանչեւ լուրն է,
որ ինձ լցնում է երախտագիտութեամբ ու բերկրանքով,
երբ նրա մասին խորհրդածում եմ սրբով:
Որովհետեւ աչքերիս առաջ
ամենաապահով ու ամենատպաւորիչ ապացոյցն է,
որ մեզ սիրում ես ամէն ինչից աւելի,
եւ որ մեր հանդէպ տածածդ այս սէրը մեզ մօտիկ է,
այնքան մօտիկ, որ հպուստ է ծնւ,
որ արմատներ է գցում մեր մէջ:
Մարդկային այս բնութեան մէջ, որ Քո ստեղծածն է,
բայց այսքա՛ն հեռու է,
Քեզնից այսքա՛ն հեռու է,
եթէ եկած չլինէիր:

Որովհետեւ կարող էիր սիրել երկնքից, Տէր,
եւ առաքել մի պատգամաբեր,
որ Քեզ ներկայացնէր.
մինչդեռ, կամեցար աշնածառ տեղափոխուել:
Կարող էիր գալ ծեր կողքին լինելու,
Դու, Աստուած, մեզ դէպի Քեզ քաշելու:
Իսկ մենք, ծարհիկ, կը պարտաւորուէինք հետեւելու Քեզ:
Բայց Դու եկար ծեր ծէգ,
Մարդ՝ մեր հետ,
Մարդ՝ մեր պէս,
այնքան մեզ նման,
որ դարձանք եղբայրներ:

Եղբայրները մանկան, որ լալիս էր,
խմում էր կաթն իր մօր:
Եղբայրները պատանու, որ սովորում էր կարդալ,
աղօթել:
Եղբայրները հասուն մարդու, որ այնքա՛ն լաւ էր քարոզում ...
չափազանց լաւ,
չարչարանքների մէջ մեռնելու աստիճան,
մեր համար ընծայելով Իր կեանքը:
Եղբա՛յր:
Եղբա՛յր մեր Յիսուս,
որ ընդունակ էիր արտասուելու ... ու ծիծաղելու ...
որովհետեւ մարդ էիր:

Տարօրինակ մտածումներ ունեմ, Տէր,
բայց ի՞նչ կարող եմ անել.
մտածել Քեզ այսքա՛ն մօտիկ մեզ ...
այսքա՛ն նման մեզ,
որպէսզի կարողանանք դառնալ նման Քեզ,
երջանկացնում է ինձ:
Երջանկացնում է այնքան,
որ զարմանում եմ, թէ ինչպէ՞ս աւելի ուրախ չեմ,
եւ ցաւով եմ տեսնում մեզ այսքան լուրջ,
երբ խօսում ենք Քո մասին,
եւ չեմ հասկանում, թէ ինչո՞ւ ենք տխուր կերպարանք ընդունում,
երբ հաւաքւում ենք Քեզ աղօթելու,
եւ Քեզ հետ Հօրն ընծայելու
Քո տառապանքները ... Քո արցունքները,
Քո ուրախութիւնները ... եւ Քո ծիծաղը,
Քո կեանքը:
Մեր շուրջը գտնուող մարդիկ
թերեւս աւելի կը հաւատային Քեզ,
եթէ մենք աւելի գուարթ լինէինք,
եւ եթէ ցոյց տայինք այդ զուարթութիւնը:

Ներիր աներեսութիւնս,
բայց այս երեկոյեան կամենում եմ ասել Քեզ,
աւագ եղբօր ծնկներին խաղացող
փոքրիկ մանկան պէս.
«Ուրախացրու ինձ»:
Այո՛, անակնկալ աղօթքս է սա.
Տէ՛ր, ծիծաղեցրո՛ւ ինձ:
Որպէսզի, ես էլ իմ հերթին,
կարողանամ ծիծաղեցնել իմ մերձակորներին:
Դրա կարիքը նրանք շա՛ր ունեն:

